ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2016 թվականի **թիվ 73** քաղ. Մոսկվա

Որպես շարժիչային վառելիք բնական գազ օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված բաղադրիչների առանձին տեսակների համար Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկից հանել ստորաենթադիրքը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում ընդգրկել ստորաենթադիրքեր՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

գ) սահմանել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ համաձայն թիվ 3 հավելվածի.

դ) Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ծանոթագրությունները լրացնել հետեւյալ բովանդակությամբ 39Դ ծանոթագրությամբ՝

«39Դ) Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը՝ մաքսային արժեքի 0 (զրո) %-ի չափով, կիրառվում է 2016 թվականի սեպտեմբերի 2-ից մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 2-ից:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 14-ի
թիվ 73 որոշման

ՍՏՈՐԱԵՆԹԱԴԻՐՔ

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկից հանվող

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավոր
8409 91 000 9	- - - այլ	—

_____

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 2

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 14-ի
թիվ 73 որոշման

ՍՏՈՐԱԵՆԹԱԴԻՐՔԵՐ

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում ընդգրկվող

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավոր
	--- այլ՝[1]	
8409 91 000 2	---- գազի բոցամուղներ՝ որպես շարժիչային վառելիք բնական գազ օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված շարժիչների գլաններ վառելիքը մատուցելու համար [5)]	
8409 91 000 8	---- այլ	—

[1]ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8409 91 000 1 ստորաենթադիրքին հաջորդող՝ առանց ծածկագրի ստորաենթադիրք:

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 3

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 14-ի
թիվ 73 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը (մաքսային արժեքից տոկոսներով՝ կամ եվրոյով, կամ ԱՄՆ դոլարով)
8409 91 000 2	---- գազի բոցամուղներ՝ որպես շարժիչային վառելիք բնական գազ օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված շարժիչների գլաններ վառելիքը մատուցելու համար [5)]	3[39Դ)]
8409 91 000 8	---- այլ	3

_____